



<p><i>Համարը</i> N 102-Ն  <i>Տիպը</i> Հրաման  <i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀԳՏ 2019.03.01/5(641) Հոդ.72  <i>Ընդունող մարմինը</i> Պետական եկամուտների կոմիտեի նախագահ  <i>Ստորագրող մարմինը</i> Պետական եկամուտների կոմիտեի նախագահ  <i>Վավերացնող մարմինը</i>  <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 11.03.2019</p>	<p><i>Տեսակը</i> Հիմնական  <i>Կարգավիճակը</i> Գործում է  <i>Ընդունման վայրը</i> Երևան  <i>Ընդունման ամսաթիվը</i> 15.02.2019  <i>Ստորագրման ամսաթիվը</i> 15.02.2019  <i>Վավերացման ամսաթիվը</i>  <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i></p>
---	--

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ԼՐԱՑՄԱՆ, ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 59-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

15 փետրվարի 2019 թ.

N 102-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ԼՐԱՑՄԱՆ, ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 59-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետը՝

### Հրամայում եմ՝

1. Հաստատել «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը»՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության լրացման կարգը»՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության հրապարակման և

ներկայացման կարգը» համաձայն N 3 հավելվածի:

4. Ուժը կորցրած ճանաչելի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի փետրվարի 13-ի «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, լրացման կարգը, հաշվետվության հրապարակման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 591Ն հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Դ. Անանյան**

Հավելված N 1  
Հայաստանի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի նախագահի  
2019 թվականի փետրվարի 15-ի  
N 102-Ն հրամանի

*Օրինակելի ձև*

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

Քաղաքապետարանի հասարակական կազմակերպությունների գործունեության

ՔԱՍԱՏ-ԱԿՏ Է  
Գործադիր մարմնի կողմից

ՔԱՇ-ԿԵՏ-ԿՈՒԹՅՈՒՆ

հասարակական կազմակերպության  
գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝	
1.1 Լրիվ անվանում	
1.2 Հ-ԿԿ	
1.3 Գտնվելու վայրը	
1.4 Գերատեսչական գրանցման համարը	
1.5 Գերատեսչական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	
1.6 Գերատեսչական (այլ թվում՝ թշնամյան)	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	
1.8 Էլեկտրոնային փոստը	
2. Հասարակական կազմակերպության՝	
2.1 Անդամների թիվը	
2.2 Միջոցներից օգտված անդամների թիվը	
2.3 Կամավորների թիվը	
2.4 Միջոցներից օգտված կամավորների թիվը	

3. Իրականացված ծրագրեր՝			
Ք/Գ	3.1 Ծրագրի անվանումը	3.2 Վայրը	3.3 Ծախսված գումարը
1.			
			3.4 Կարգավիճակը

4. Տարեկան մուտքեր և ստացման աղբյուրներ՝		
Ք/Գ	4.1 Դրամական միջոցներ	4.3 Ստացման աղբյուրները
1.		
	Ընդամենը	
4.2 Գույքը		
Ք/Գ	4.2.1 Տեսակը	4.2.2 Ամօճը
1.		
	Ընդամենը	

5. Օգտագործված միջոցներ՝	
5.1 Դրամական միջոցներ	
5.2 Գույքը	
Ք/Գ	5.2.1 Տեսակը
1.	
	5.2.2 Ամօճը
	Ընդամենը

6. Կանոնադրական կառույցների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	

7. Ահաբերված քանակ	
7.1 Ժողովի	7.2 Կոլեգիալ կառավարման այլ մարմինների

**Կից ներկայացվում է՝**

1) Առդիտորի եզրակացություն՝  թե՞

2) Վերստուգող մարմնի եզրակացություն՝  թե՞

**Նշումներ**

Այլ փաստաթղթեր՝

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ**

1. Հասարակական կազմակերպությունների (այսուհետև՝ Կազմակերպություն) գործունեության հաշվետվության օրինակելի ձևի (այսուհետև՝ Հաշվետվություն) «ՀԱՍՍԱՏՎԱԾ Է Գործադիր մարմնի կողմից» դաշտում նշվում է գործադիր մարմնի կողմից հաշվետվության հաստատման ամսաթիվը՝ օրացույցի օգնությամբ:
2. Հաշվետվության «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ» դաշտի առաջին մասում նշվում է հաշվետվություն ներկայացնող Կազմակերպության անվանումը՝ ինքնաշխատ եղանակով, իսկ երկրորդ մասում այն հաշվետու տարին, որի համար ներկայացվում է հաշվետվությունը՝ բացվող ցանկի օգնությամբ:
3. Հաշվետվության 1.1-1.5 կետերում համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով լրացվում են Կազմակերպության՝ լրիվ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը, տվյալների անհամապատասխանության դեպքում՝ սխալներն ուղղելու հնարավորությամբ:
4. Հաշվետվության 1.6-1.8 կետերում լրացվում են Կազմակերպության՝ հեռախոսը (այդ թվում՝ բջջային), պաշտոնական ինտերնետային կայքը և էլեկտրոնային փոստը, ընդ որում 1.6 դաշտում առկա ստեղծի օգնությամբ հնարավոր է ավելացնել լրացուցիչ տողեր այլ հեռախոսահամարներ ավելացնելու նպատակով:
5. Հաշվետվության 2-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ Կազմակերպության անդամների (այդ թվում՝ կամավորների) թիվը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցների մասով կազմակերպության միջոցներից օգտված անդամների (այդ թվում՝ կամավորների) թիվը:
6. Հաշվետվության 3-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության կողմից հանրային միջոցներով իրականացված ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվություն՝ յուրաքանչյուր ծրագրի անվանումը և վայրը, հաշվետու տարվա ընթացքում յուրաքանչյուր ծրագրի համար ծախսված գումարի չափը և ծրագրի կարգավիճակը (ավարտված կամ ընթացքի մեջ): Մեկից ավելի ծրագրեր իրականացնելու դեպքում լրացուցիչ տողեր ավելացվում են 3-րդ կետում առկա ստեղծի միջոցով:
7. Հաշվետվության 4-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում ստացված հանրային դրամական միջոցները և այլ գույքը (տեսակը, արժեքը)՝ նշելով ստացման աղբյուրները: Լրացուցիչ տողեր ավելացվում են 4.1 և 4.2 կետերում առկա ստեղծի միջոցով:
8. Հաշվետվության 5-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում օգտագործված հանրային դրամական միջոցների չափը և այլ գույքը (տեսակը, արժեքը): Լրացուցիչ տողեր ավելացվում են 5.2 կետում առկա ստեղծի միջոցով:
9. Հաշվետվության 6-րդ կետում լրացվում է հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերի չափը:
10. Հաշվետվության 7-րդ կետում, այդ թվում՝ 7.1 և 7.2 ենթակետերում, լրացվում են Կազմակերպության Ժողովի և կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերի քանակը: Ընդ որում, հաշվետու տարում նիստեր չգումարելու դեպքում 7-րդ կետում, այդ թվում՝ 7.1 և 7.2 ենթակետերում, լրացվում է «0»:
11. Հաշվետվության «Կից ներկայացվում է» բաժնում «Կցել» ստեղծի միջոցով ընտրվում և կցվում է աուդիտորի եզրակացության ֆայլը, եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով և վերստուգող մարմնի եզրակացության ֆայլը, եթե Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված է վերստուգող մարմնի կազմավորում, ինչպես նաև համապատասխանաբար նշում է կատարվում կցվող փաստաթղթերի քանակի վերաբերյալ: Կցված ֆայլը (փաստաթուղթը) հետացվում է «Ջնջել» ստեղծի միջոցով:
12. Կազմակերպությունը հնարավորություն ունի Հաշվետվության «Նշումներ» դաշտում ավելացնելու իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ և «Կցել» ստեղծի միջոցով ընտրել և հաշվետվությանը կցել այլ կյուրեր պարունակող ֆայլեր: Կցված ֆայլը հետացվում է «Ջնջել» ստեղծի միջոցով:
13. Հաշվետվության «Հիշել ժամանակավորապես» ստեղծի միջոցով հնարավոր պահպանել լրացված տեղեկությունները՝ հետագայում դրանցում փոփոխություններ կատարելու կամ հաշվետվությունը գրանցելու նպատակով: Այս դեպքում հաշվետվությունը չի հրապարակվում:
14. Հաշվետվության «Գրանցել» ստեղծի միջոցով Կազմակերպությունը հաստատում է իր կողմից լրացված տեղեկությունները և հաշվետվությունը հրապարակվում է ՀՀ ՊԵԿ հարկային ծառայության պաշտոնական կայքում ([www.taxservice.am](http://www.taxservice.am)):
15. Հաշվետվությունը համարվում է թերի, եթե չի պարունակում «Հասարակական կազմակերպությունների մասին»

ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկություններից որևէ մեկը կամ պարունակում է ակնհայտ հակասություններ:

16. Հաշվետվությունը լրացվում է ՀՀ դրամով:

Հավելված N 3  
Հայաստանի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի նախագահի  
2019 թվականի փետրվարի 15-ի  
N 102-Ն հրամանի

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ  
ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ**

1. Հասարակական կազմակերպությունն իր գործունեության մասին հաշվետվությունը, իսկ աուդիտը պարտադիր լինելու դեպքում, նաև աուդիտորի եզրակացությունը, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հրապարակում է ՀՀ ՊԵԿ հարկային ծառայության պաշտոնական կայքում ([www.taxservice.am](http://www.taxservice.am)):
2. Հասարակական կազմակերպության կողմից սույն կարգի 1-ին կետում նշված հաշվետվությունը, աուդիտորի եզրակացությունը և վերստուգող մարմնի եզրակացությունը (առկայության դեպքում) սահմանված կարգով հրապարակելը համարվում է Լիազոր մարմին ներկայացում: